

Պատարագ Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սաղմոս ԶԼԱ.

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն Հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տեառն եւ ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ:

Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մաշճաց իմոց:

Թէ տաց քոն աչաց իմոց կամ՝ նինջ արտեանաց իմոց կամ Հանգիստ իրանաց իմոց,

մինչեւ գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակովբայ:

Ահա՛ լուաք զնմանէ Խփրաթայ եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա, երկիրպագցուք ի տեղոջ ուր կացեալ էն ոտք նորա:

Արի՛, Տէր, ի Հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն Դաւթի սիրելոյ քո մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումնէ:

Երդուաւ տեր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա, ի պտղոյ որովայնի նորա

նստուցանել յաթոռ նորա:

Թէ պաշտեցեն որդիք քո զօրէնս իմ եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն եւ ընտրեաց բնակիլ ի նմա. սաէ, ա՛յս է Հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի ամն բնակեցայց զի Հաճեցայ ընդ սա:

Չայրիս սորա օրհնելով օրհնեցից եւ զաղքատս սորա լցուցից Հացիւ:

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ. պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց սորա զգեցուցից զամօթ եւ ի վերայ նորա ծաղկեցի սրբութիւն իմ:

Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ՛ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սարգաւազն

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Խնդրեսցուք Հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր:

Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուցէ եւ ողորմեսցի:

Եւ ասասցեն երկրորտասան անգամ՝

Տէր ողորմեա:

Քահանայն

Որ զգեցեալ էս զլոյս որպէս Հանդերձ Տէր մեր Յիսուս Քրիստոս, անճառելի խոնարհութեամբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար. որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մեքիսեդեկի եւ զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ:

Տէր ամենակալ, որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային Հանդերձ զգեհուոյ արժանի արա եւ զիս ի ժամուս յայսմիկ, զանպիտան ծառայս քո, որ Համարձակիմ եւ մերձենամ ի նոյն Հոգեւոր պաշտօն փառաց քոց, որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է Հանդերձ պղծութեան, եւ զարդարեցայց լուսով քով: Ընկեա յինէն զչարիս իմ եւ թօթափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց Հանդերձեալ լուսոյդ առ ի քէն: Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պաշտեցին զպատուիրանս քո. զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առաքաստիդ ընդ իմաստուն կուսանան փառաւորել զքեզ՝ Քրիստոս, որ բարձեր զմեզս ամենեցուն: Չի դու ես սրբութիւն անձանց մերոց եւ քեզ բարերարիդ Աստուծոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՛ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն

Մարկաւագն

**Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք:
Ընկալ, կեցո եւ ողորմեա:**

Քահանայն

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ յետ օրհնութեան՝ դիցէ յառաջ զխոյրն ի գլուխն եւ ասացէ.

Դիր, Տէր, սաղաւարտ փրկութեան ի գլուխ իմ պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շապկին

Չգեցո ինձ, Տէր, Հանդերձ փրկութեան եւ պատմունճան ուրախութեան, եւ շուրջ պատեա զգգեստովս փրկութեան. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Փորուրարին

Չգեցո, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն եւ սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գօտւոյն

Շուրջ պատեսցէ կամար Հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ մտացս եւ շիջուցէ ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցի ի սոսա. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բազպանին

Տուր, Տէր, զօրութիւն աջոյ (կամ ձախոյ) ձեռին իմոյ եւ լուս զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ Հոգւոյ եւ մարմնոյ. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վակասին

Չգեցո, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նափորտին՝ որ է Շուրջան

Տէր, ողորմութեամբ քով զգեցո ինձ զգեստ պայծառ եւ պարսպեա ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստութն, ասէ.

Յնձասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոց ինձ Հանդերձ փրկութեան եւ պատմունճան ուրախութեան, իբրեւ փեսայի եդ ինձ պսակ եւ որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Թաշկինակին

Սրբեա, Տէր, զձեռս իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. շորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն, սարկաւագունքն եւ այլ սպասաւորք գան առաջի Սրբոյ Սեղանոյն:

Խորհուրդ Խորին անՀաս անսկիզբն որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս Հրեղինաց: Թագաւոր երկնաւոր զԵկեցեցի քո անշարժ պաՀեա. եւ զերկրպագուս անուանդ քում պաՀեա ի խաղաղութեան:

Սաղմոս ԻԵ.

Քահանայն

Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով քով, Տէր:

Դատ արա ինձ, Տէր, զի ես յամբժութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ, զի մի եղէց Հիւանդ:

**Փորձեա զիս, Տէր, եւ քննեա զիս. փորձեա զերիկամոնսս իմ եւ զսիրտ իմ:
Ողորմութիւն քո, Տէր, առաջի աչաց իմոց եւ Հաճոյ եղէց ճշմարտութեան քում:
Ոչ նստայց ես յաթոռս նանրաց եւ ընդ անօրէնս ես ոչ մտից:
Ատեցի ես զժողովս չարաց եւ ընդ ամբարիշտս ես ոչ նստայց:
Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով քով, Տէր:
Լսել ինձ զձայն օրհնութեան քո եւ պատմել զամենայն սքանչելիս քո:
Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց:
Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ եւ մի ընդ արս արինաՀեղս զկեանս իմ:
Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են եւ աջ նոցա լի է կաշառօք:
Ես յամբժութեան իմում գնացի. փրկեա զիս, Տէր, եւ ողորմեա ինձ:
Ոտն իմ կացցէ յուղղութեան:
Յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Քահանայն

Վասն սրբուՀոյ Աստուածածնին բարեխօսութեանն, Տէր, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Սարկաւագն

Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Ընկալ Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սրբուՀոյ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց: Լուր մեզ, Տէր, եւ ողորմեա, ներեա, քաւեա եւ թող զմեղս մեր: Արժանաւորեա գոՀութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուՀոյ Աստուածածնին եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի ձեր, Հարք եւ եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով

բանիւ եւ գործով եւ ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ. մեղայ, մեղայ, աղաչեմ զձեզ, ինդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Ոմն ի քահանայից կամ որք մերձն են պատասխանեցեն.

Ողորմեսցի քեզ Աստուած Հզօրն եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս եւ յառաջիկայէն փրկեսցէ եւ Հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ Հանգուցէ զքեզ ի Հանդերձեալ կեանսն. ամէն:

Քահանայն

Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս. ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն, Հզօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Դպիրքն

Յիշեսցլիր եւ զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Քահանայն

Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Սաղմոս ԴԹ

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք տեսուն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք, մեք ժողովուրդ եւ խաշն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, եւ օրհնութեամբ՝ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք տեսուն, եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Սուրբ եկեղեցեալս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս, խորաՀեալ երկիւղիւ երկիրպագանեմք: Չսուրբ եւ զհրաշալի եւ զպաղթող (զտերութիւնդ) քո փառաւորեմք, եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս, ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն եւ սպասաւորք սեղանոյն էլցեն ի խորանն՝ ասելով Սաղմոս ԽԲ.

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ: Սարկաւագն.

Դատ արա ինձ Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ, փրկեա զիս:

Դու, Աստուած, Հզօրիչ իմ ես. ընդէ՛ր մոռացար զիս, ընդէ՛ր տրտում գնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ:

Առաքեա, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւնս քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ Հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:
 Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:
 Արդ, ընդէ՛ր տրտում ես անձս իմ՝ կամ՝ ընդէ՛ր խռովեա զիս. յուսա առ Աստուած,
 խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:
 Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
 Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք:
 Օրհնեսցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղոջս
 փառաբանութեան եւ երգել զերգս Հոգւորա:
 Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Ի յարկի սրբութեան եւ ի տեղոջս փառաբանութեան, Հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան
 քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղոյս,
 խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող (զտէրութիւնդ) քո
 օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս,
 ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եթէ պատարագիչն քահանայ իցէ աստ քարշեացն զվարագոյրն եւ դպիրքն երգն զմեղեղին ըստ
 պատշաճի աւուրն: Իսկ եթէ եպիսկոպոս իցէ պատարագիչն՝ դպիրքն եղանակն զՄատթայի մինչ
 պատարագիչն կարդայ աղօթք Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ:

Աղօթք առ Սուրբ Հոգին Գրիգորի Նարեկացոյն:

Ամենակալ, բարերար, մարդասէր, Աստուած բոլորից, յօրինող երեւութից եւ աներեւութից,
 փրկող եւ Հաստատող, ինձամոզ եւ խաղաղարար, Հօր Հօր Հոգի, Հայցեմք բազկատարած
 մաղթանաց գոչմամբ Հեծութեան, յանդիման եղեալ քեզ աւաւորիդ: Մատչիմք մեծաւ
 դողութեամբ, սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում անզնին
 զօրութեանդ, իբր աթոռակցի, փառակցի եւ արարչակցի Հայրենի անկապուտ պատուոյդ, եւ
 քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Էմմանուէլի, զքեզ
 առաքչի, փրկչի եւ կենդանատուի եւ արարչի ամենայնի:

Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միանական Աստուածութեանդ, յորոց
 մի եւ դու ճանաչիս անՀաս: Քեզ ի ձեռն քո առաջինքն նաՀապետական տո՛ւմին շառաւիղք,
 տեսանողք անուանակոչեալք, զանցեալն եւ զգալոցան, զեղեալն եւ զոչ գոյացեալն
 անստուերաբար բարբառով բանի վերապատուեցին:

Հոգի Աստուծոյ, քարոզեալ զքեզ Մովսիսի. որ ի գնան քո ի վերայ ջուրցն, անպարագիր
 զօրութիւն, աւեղ շրջարկութեամբ տաժողականա՛ւ թեւապարփակ պաշտպանողօրէն
 գթասիրեալ ի ճնունդս նորոգս, զաւազանին խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան
 օրինականութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մաժուած վերջում վարագուրիդ՝
 յօրինեցեր, կարող, տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն
 էից յանէից:

Քեւ ստեղծանին ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ի քէն յայնմ
 ժամանակի՛ որ է օր վերջին այսմ կենցաղի եւ օր առաջին յերկրին կենդանեաց: Քեզ
 Հնազանդեցաւ միութեամբ կամացն՝ որպէս Հօրն իւրում, ազգակիցն քո, էակիցն Հօր,
 անդրանիկն Որդի, մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց ճմարիտ Աստուած՝ Հաւասար եւ
 Համագոյ Հօր իւր Հօրի. եւ զառ ի քեզ Հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց. եւ իբր
 զԱստուածամարտիցն՝ զքո Հետտերոյն չարաբանական բերանս կարկեաց. եւ զիւրն շրնորհեաց
 արդարն եւ անարատն, գտիչն ամենայնի, որ վասն մեղաց մերոց մատնեցաւ, եւ յարեաւ վասն
 զմեզ արդարացուցանելոյ:

Նմա փառք ի ձեռն քո, եւ քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դարձեալ կրկնեցից ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւն վերհայեցողութեան լուսոյ հրաշապէս յայտնեսցի, ազդեալ, աւետարանեալ վերստին կրկին զխաղաղութիւն:

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուելոց Հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ եւ անստեղծ անժամանակ Հոգւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմուռնչ Հեծութիւնս առ ողորմածդ Հայր. որ զսուրբսն պաշէս եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս կազմես կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձեալդ Հօր:

Արդ՝ ազատես զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է Հաճոյ քումդ բնակութեան. եւ մի շիջցին առ ի մէջ լուսոյդ շնորհաց փայլմունք ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի գքեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից եւ ընտիր վարուց ինկելոց:

Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի, եւ միւսդ ընդունի Հաճեալ ընդ մեզ Հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս եւ յարգարես զմեզ օթեանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան: Եւ Հալեսցի ի Հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդւովդ Աստուծոյ Հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց ի Հայրենի ժառանգութիւնն, եւ զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան:

Այո, այո, եւ ես մի եմ ի նոցանէ, եւ զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ զարեամբ Քրիստոսի ստացեալս: Չի եւ յայսմ ամենայնի յամենայնի ծանիցի քո Աստուածութիւնդ, ընդ Հօր փառաւորեալ Համապատուաբար ի մի կամս, եւ ի մի իշխանութիւն գովութեան:

Դպիրքն
Ընտրեալդ Աստուծոյ, ով երջանիկ սուրբ քահանայ,
Նմանեալ Ահարոնի եւ Մովսէսի մարգարէին.
Այնմ որ զգեստուցն էր յօրինող,
Չոր Ահարոն միշտ զգեսոյր:

Սարկաւագն
Օրհնես, Տէր:

Եպիսկոպոսն
Չի քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ձգեսցեն զվարագոյրն:

Մատուցանէ սարկաւագն գնշխարն՝ ասելով.
Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք:
Ընկալ կեցո եւ ողորմես:

Եւ քահանայն խաչակնքէ ի վերայ նշխարին՝ ասելով.
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ առեալ քահանայն գնշխարն դնէ ի մաղգմայն՝ ասելով.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ բազմեալ Հանգչի յանարուեստ աթոռ: Չմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան: Օրհնեցէք, գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Մատուցանէ սարկաւազըն զգինին՝ ասելով.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Ընկալ, կեցո եւ ողորմեա:

Եւ քահանայն խաչակնքէ ի վերայ գինոյն՝ ասելով.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ քահանայն արկանէ զգինին խաչանիշ ի սկիին՝ ասելով.

Յաղագս յիշատակի փրկագործ սնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ ի կողաշուս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան: Օրհնեցէք, գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Եւ ասացէ զաղօթս Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի ի վերայ ընծայիցն.

Տէր Աստուած մեր, որ զերկնաւոր Հացդ զտէրն մեր Յիսուս Քրիստոս, զկերակուրդ ամենայն աշխարհի, առաքեցեր փրկիչ եւ կեցուցիչ եւ բարերար՝ օրհնել եւ սրբել զմեզ: Ինքնին դու Տէր, Ը օրհնեա եւ այժմ՝ զառաջագործիւնս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս եւ վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պաշեա ի քաշանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց: Չի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծկայելչութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս ԴԲ

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած: Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո, ի սկզբանէ յաւիտեանս դու ես:

Ամբարձան գետք, Տէր, եւ Համբարձին գետք զձայս իւրեանց. եւ յարիցեն գետք ի գնացս իւրեանց:

Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու:

Աքանչելի ես դու, Տէր, ի բարձունս. վկայութեանց քոց մեք յոյժ Հաւատացաք:

Տան քում վայելէ սրբութիւն, Տէր, ընդ երկայն աւուրս:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ խաչակնքեսցէ ի վերայ ընծայիցն երիցս՝ ասելով.

Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն Հովանի լիցի ի վերայ քո:

Քահանայն արկանէ խունկ եւ խնկէ զընծայսն՝ ասելով.

Խոնկ մատուցանեմ առաջի քո, Քրիստոս, բուրումն Հոգեւորական: Ընկա՛լ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ՝ ի Հոտ անուշից:

Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ. եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բացցեն զվարագոյրն:

Ճաշու Ժամ

Քահանայն խնկարկելով իջանէ ի թափօր ի մէջ եկեղեցոյն՝ հանդերձ սարկաւագօքն: Եւ եղանակէն շարական թափօրի ըստ պատշաճի աւուրն: Եւ յաւարտիլն ելանէ ի խորան եւ երկրպագէ Ս. Սեղանոյն:

*Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:
Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քով Քրիստոս, եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զգասս առաքելոց եւ մարգարէից սուրբ վարդապետաց:
Այսօր ժողովեալ դաւք քաճանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խոնկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինակ ըստ Հոռոմն Չաքարիայ: Ընկալ առ ի մէնջ զինկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զԼոյի եւ զԱբրահամու. բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայս:*

Սարկաւագն
Օրհնեա, տէր:

Քահանայն
Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասացեն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:
Յաւուրս կիրակէից՝
*Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն:
Անփոփոխելիք մարդ եղեալ, խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր:
Մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն. կեցո՛ զմեզ:*

Սարկաւագն
Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Ընկալ, կեցո եւ ողորմեա:
Օրհնեա, տէր:

Քահանայն
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն
Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն
Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպիրքն
Առաջի քո Տէր:

Քահանայն
Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անՀասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ անբաւ, դու ըստ առատ մարդասիրութեանդ քումնայեաց ի ժողովուրդս քո եւ ի տաճարս այս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Չի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասացեն զճաշու սաղմոսն եւ զշարականն ըստ պատշաճի աւուրն:

Քահանայն

Տէր Աստուած մեր կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո. զլրումն եկեղեցոյ քո պաշէա: Սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեա Աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողուր զլուսացեալսս ի քեզ: Չի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն

Որ Հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոյ յանուն քո զինդրուածս պարգեւել խոստացար, դու եւ այժմ՝ զծառայից քոց զինդրուածս առ ի յօգուսն կատարեա, շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումդ ճշմարտութեան եւ ի Հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգեւելով: Չի բարերար եւ մարդասէր ես Աստուած. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զգինուորութիւնս Հրեշտակաց եւ Հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց, որա այժմ՝ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց Հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քում բարերարութեանդ: Չի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Սարկաւագն

Պռօսխումէ:

Եւ սարկաւագն բարձրացուցեալ զԱւետարանն սուրբ դառնայ ի շուրջ խորանոյն,

Ձատկի, Յինանց եւ Յարութեան Կիւրակէից.

Աստուածայայտութեան եւ Վարդավառի.

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: Երիցս կրկնեցեն:

Տեառնդառաջի, Ծաղկազարդի եւ Հոգեգալստեան.

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր եւ գալոց ես, ողորմեա մեզ: Երիցս կրկնեցեն:

Վերափոխման.

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր ի փոխումն մօր քո եւ կուսի, ողորմեա մեզ: Երիցս կրկնեցեն:

Խաչի, Եկեղեցոյ, Սրբոց եւ Պահոց.

Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Երիցս կրկնեցեն:

Քահանայն

Աստուած սուրբ, որ ի սուրբս Հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիրպագանեն. որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, եւ ուսուցեր ինդրել զիմաստութիւն եւ զգօնութիւն, եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդիր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան. որ արժանի արարեր զմեզ, զնուաստացեալ եւ զանարժան ծառայսս քո, ի ժամնս յայսմիկ կալ

առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել քեզ:

Դու, Տէր, ընկալ ի բերանոյ մեղաւորաց զերեքսրբեան օրհնութիւնս եւ պաշեա զմեզ քոյին քաղցրութեամբդ. թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա զՀոգի, զմիտս եւ զմարմինս մեր, եւ շնորհեա ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց, ոյք յաւիտենից քեզ բարեհաճոյացան: Չի սուրբ ես Տէր Աստուած մեր, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ Հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վասն Հայրապետին մերոյ Տեառն --- սրբազնագոյն կաթողիկոսի կենաց եւ փրկութեան Հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վասն Նախագահայն Հանրապետութեան Հայաստանի եւ Միացեալ Նահանգաց Ամերիկայի, եւ ամենայն պաշտօնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Վանն Հոգւոյն Հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ Հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Եւ եւս միաբան վանն ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սարկաւագն

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում: ասասցուք ամենքեան միաբանութեամբ:

Դպիրքն

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Քահանայն

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս եւ ողորմեսցիս ըստ մեզի ողորմութեան քում: Չգթութիւն քո առաքեա ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս որք ակն ոնին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Չի ողորմած եւ մարդասէր եւս Աստուած գոլով, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Ալէլուիա: Օրթի:

Քահանայն

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն

Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Երկիւղածութեամբ լուարուք:

Սարկաւագն

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ **աւետարանի:**

Դպիրքն
Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկաւագն
Պռօսխումէ:

Դպիրքն
Ասէ Աստուած:

Եւ ընթեռնու սարկաւագն զԱւետարանն ճաշու ըստ պատշաճի աւուրն:

Դպիրքն
Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Հանգանակ Հաւատոյ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր՝ Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յեութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, ըյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Եղև ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեղապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, Հոգի, եւ միտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանդն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալն, եւ բնակեցաւ ի սուրբն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից Հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւնն երկնից, եւ ի կեանն յաւիտենականս:

Սարկաւագն

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղևն կամ յայլմէ եութենէ ասէն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նշովէ կաթողիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի:

Քահանայն

Իսկ մեք փառաւորեացուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն եւ մի Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեացուք:

Դպիրքն
Տէր ողորմեա:

Սարկաւագն
Եւ եւս Հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ի ժամուս պաշտամանն եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ: Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տերութեան նորա, եւ նա տացէ մեզ միաբան, միով Հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարիս, զի զողորմութեան զնորհան իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի:

Դպիրքն
Կեցո Տէր:

Սարկաւագն
Չժամ սուրբ պատարագիս եւ զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել, Հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն
Շնորհեա Տէր:

Սարկաւագն
ՉՀրեշտակ խաղաղութեան պաշտպան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն
Շնորհեա Տէր:

Սարկաւագն
Չբաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն
Շնորհեա Տէր:

Սարկաւագն
Չսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն
Շնորհեա Տէր:

Սարկաւագն
Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն
Տէր ողորմեա:

Սարկաւագն
Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սարկաւագն

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում: ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրքն

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Քահանայն

Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ եւ առատ պարգեւօք բարերարութեան քո, որ դու քոյին կամաւդ ի Ժամուս յայսմիկ Համբերեցեր չարչարանաց խաչի եւ մահու յաղագս մեղաց մերոց, եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա եւ զմեզ, Տէր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:

Որպէսզի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն

Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն

Առաջի քո Տէր:

Քահանայն

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պաշեա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք Հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն: Վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Սարկաւագն

Օրհնեա, տէր:

Քահանայն

Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան:

Դպիրքն

Ամէն:

Եթէ եպիսկոպոս իցէ պատարագողն՝ ի բաց հանցէ զեմիփորոնն, զխոյրն, զհողաթափսն, զպանակէն եւ զմատանին. իսկ եթէ քահանայ իցէ, ի բաց հանցէ զսաղաւարտն եւ զհողաթափսն

Կանոն Սրբոյ Պատարագի

Սարկաւագն

Մի՛ որ յերախայից, մի՛ որ ի թերաշաւտից, եւ մի՛ որ յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեացի յաստուածային խորհուրդս:

Դպիրքն

Մարմին տերունական եւ արին փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս, երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց:

Սարկաւագն

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դըպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս Հոգեւորս:

Դպիրքն

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստուած, զքո սուրբ զԵկեղեցի: Հազարք Հազարաց Հրեշտակապետք կան առաջի քոյ. եւ բիւրք բիւրոց Հրեշտակք պաշտեն զքեզ, Տէր. եւ ի մարդկանէ Հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց:

Սարկաւագն

Յարեւու եւար զխորան իւր եւ ինքն որպէս փեսայ, զի ելանէ յառագաստ իւրմէ:

Դպիրքն

Եւ ցնծայ նա որպէս Հսկայ յընթանալ զճանապարհս իւր:

Սարկաւագն

*Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկնից յերկինս ընդ արեւելք:
Աստուած ի Հարաւոյ եկեացէ եւ սուրբն ի Փառան լեռնէ:*

Քահանայն

Ոչ որ արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր անտիւք եւ ցանկութեամբ մատչիլ ի սեղան քո կամ սպասաւորել արքունական փառաց քոց: Քանզի պաշտել զքեզ մեծ եւ աշաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է:

Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ, անպարագրելի Բանդ Հօր, եղեր մարդ եւ քաշանայապետ մեր երեւցար: Եւ իբր Տէր ամենեցուն, այսմ սպասաւորութեան եւ անարին զկենման զքաշանայութիւն աւանդեցեր մեզ:

Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց, որ ի վերայ քերովբեական աթոռոյ բազմիս, սերովբէից Տէր եւ թագաւոր Իսրայելի. որ միայն սուրբ ես եւ ի սուրբս Հանգուցեալ:

Աղաչեմ զքեզ միայն բարերար եւ Հեշտալուր, նայեա յիս՝ ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո, եւ սրբեա զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին. եւ բաւականացո զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքաշանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ Սեղանոյս եւ քաշանայագործել զքո անարատ Մարմինդ եւ զպատուական Արիւնդ:

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի մերժեր զիս ի ծառայից քոց: Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն՝ ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ:

Վասն զի դու ես որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք Հանդերձ անսկիզբն քո Հարբզ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ի սարկաւագացն վերաբերիցի սրբազան Հացն եւ անմահութեան Բաժակն ի սուրբ Սեղանն:

Սաղմոս ԻԳ. 7:10

Սարկաւագն

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. Համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց:

Քահանայն

Ո՛վ է սա թագաւոր փառաց, Տէր Հզօր զօրութեամբ իւրով, Տէր կարող ի պատերազմի:

Սարկաւագն

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. Համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց:

Քահանայն

Ո՛վ է սա թագաւոր փառաց, Տէր զօրութեանց:

Սարկաւագն

Սա ինքն է թագաւոր փառաց:

Եւ պատարագողն առնու ի ձեռաց սարկաւագին եւ բարձրացուցէ ի տես ժողովրդեանն՝ ասելով.

Քահանայն

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Եւ եւս Հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ. մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերաՀաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ Հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան, կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք զողորմութեան զչնորՀս, յաւուր յայսնութեան եւ ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Աեցուցէ եւ ողորմեսցի:

Դպիրքն

Աեցո՛ Տէր եւ ողորմեա:

Քահանայն

Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց. որ յանելութենէ զբնաւս ի ցուցակութիւն ամեալ գոյացուցեր. որ եւ զմերս զՀողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի աՀաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու, Տէր, որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ առ ի մէջ զառաջագործութիւնս զայս, եւ

աւարտեա զսա ի խորհրդականութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգեւեա ճաշակողացս զՀացս զայս եւ զբաժակս.

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն
Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն
Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն
Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն
Առաջի քո Տէր:

Սարկաւագն
Ողջոյն տուք միմեանց ի Համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք Հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք:

Դպիրքն.
*Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. որ էնն Աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն Հնչեցաւ. սուրբ ողջունի Հրաման տուաւ:
Եկեղեցիս մի անձն եղև. Համբոյրս յօդ լրման տուաւ:
Թշնամութիւնն Հեռացաւ. սէրն յընդանուրս սփռեցաւ:
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն. տուք զօրհնութիւն ի մի բերան:
Միասնական աստուածութեանն որում սրովբէքն են սրբաբան:*

Սարկաւագն
ԱՀիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարուք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:

Դպիրքն
Առ քեզ Աստուած:

Սարկաւագն
Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն Աստուծոյ:

Դպիրքն
Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քահանայն
Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ը եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:

Դպիրքն
Ամէն եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Չգրունա, զգրունա.

Ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիրդիւ:

Դպիրքն

Ունիմք առ քեզ Տէր ամենակալ:

Սարկաւագն

Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

Դպիրքն

Արժան եւ իրաւ:

Քահանայն

Արժան է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ, Հայր ամենակալ. որ զանիծիցն բարձեր զկրօնիմն քոյին անզննելի եւ արարչակից Բանիւդ. որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի, սեպհականեաց զհաւատացեալս ի քեզ. եւ զննելի բնութեամբ ըստ ի կուսէն անտեսութեանն՝ Հաճեցաւ բնակիլ ի մեզ. եւ նորագործ Աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար:

Վասն զի որում ոչն Հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ Աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս.

Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն, միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ Համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել.

Դպիրքն

Սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց:

Լի են երկինք եւ երկիր փառօք քո:

Օրհնութիւն ի բարձունս:

Օրհնեալք որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն:

Ովաննա ի բարձունս:

Քահանայն

Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ, եւ ո՛վ դք պանծասցի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեան զեղմունս. որ եւ անդէն իսկ ի նախնումն զանկեալն ընդ մեզք զանազան եղանակօք խընամեալ սփոփեցեր մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ, եւ ստուերակերպ երնջուցն մատուցմամբ:

Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զգատակնիք, ետուր մեզ զՈրդիդ քո Միածին՝ պարտապան եւ պարտս, զենումն եւ օծեալ գառն եւ երկնաւոր Հաց, քահանայապետ եւ պատարագ: Վասն զի ինքնդ է բաշխող եւ նոյն ինքնդ բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս:

Վասն զի եղեալ Հաւաստեաւ եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ Աստուածածնէն եւ ի սուրբ կուսէն Մարիամայ, ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյցն եւ յառիթմ փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչ:

Առեալ զՀացն ի սուրբ, յաստուածային, յանմահ, յանարատ եւ յարարչագործ ի ձեռս իւր. Ի՛ օրհնեաց, գոհացաւ, եբեկ եւ ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով.

Առէք կերէք այս է մարմին իմ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրքն
Ամեն:

Քահանայն

Նոյնպէս եւ զբաժակս առեալ Ի օրհնեաց, գոհացաւ, էարբ եւ ետ իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով.
Արբէք ի սմանէ ամենքեան, այս է արինն իմ՛նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց Հեղանի, ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրքն
Ամեն:

Հայր երկնաւոր. որ զՈրդիդ քո ետուր ի մաՀ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց. Հեղմամբ արեան նորա աղաչեմք զքեզ ողորմեա քո բանաւոր Հօտի:

Քահանայն

Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո Միածին. Եւ իջեալ ի ստորին վայրս մաՀու մարմնովն՝ զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ. եւ զնիգս դժոխոցն աղարտեալ Հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց եւ մեռելոց:

Եւ արդ մէք, Տէր, ըստ այսմ Հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական Մարմնոյ եւ Արեան Միածնի քոյ, յիշեմք զդորա որ վասն մեր զՓրկագործ չարչարանան, զկենսատու խաչելութիւնն, զերեքօրեայ թաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս Համբարձումն, զնստիլն ընդ աջմէ քո, Հայր, զաՀաւոր եւ ըզփառաւորեալ զմիւսանգամ գայրուստն խոստովանիմք եւ օրհնեմք.

Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Դպիրքն

Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ գովեմք զքեզ. գոհանամք ըզքէն. աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր:

Քահանայն

Չքեզ արդարեւ Տէր Աստուած մեր գովեմք եւ զքէն գոհանամք Հանապազ, որ զանց արարեալ զմերով անարժանութեամբս, այսպիսի աՀաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս:

Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք միշտ, եւ ո՛նայն գտանիմք Հանապազ. այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ ապաւինեալ Համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի քոյ, Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՛ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն
Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն
Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն
Առաջի քո Տէր:

Որդի Աստուծոյ որ պատարագեալ Հօր ի Հաշտութիւն. Հաց կենաց բաշխիս ի մեզ Հեղմամբ արեան քո սուրբ, աղաչեմք զքեզ ողորմեա արեամբ քով փրկեալ Հօտի:

Քահանայն

Երկիրպագանեմք եւ աղաչեմք եւ ինդրեմք ի քէն, բարերար Աստուած, առաքեա ի մեզ եւ յառաջի եդեալ ընծայս այս զմշտնջենաւորակից քո եւ զէակից Սուրբ Հոգիդ:

Սարկաւագն

Ամէն. օրհնեա, տէր:

Քահանայն

Որով զՀացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Երիցս կրկնեսցէ

Եւ զբաժակս օրհնեալ արին ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Երիցս կրկնեսցէ

*Որով զՀացս եւ զգինիս օրհնեալ մարմին եւ արին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ քով Սրբով: (Երիցս կրկնեսցէ)
Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Դպիրքն

Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր. Հեղմամբ արեան սորա աղաչեմք զքեզ Հանգո զհոգիս մեր ննջեցելոց:

Քահանայն

Սովաւ շնորհեա զսէր, զՀաստատութիւն եւ զրդձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, ղեկավարաց պետութեանց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, օդանաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ եւ օրոց շնորհեա զբարեխառնութիւն, եւ անդոց զպտղաբերութիւն, եւ խխտացելոց ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն:

Սովաւ Հանգո զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալն, զնախաւարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս, եւ զբնաւ ուխտ եկեղեցոյ քոյ սրբոյ, եւ զամենայն յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս Հաւատով վախճանեալս:

Ժողովուրդն կարող է նստել:

Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քահանայն

Աստուածաձնին Սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի Նախավկային, եւ ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, եւ ամենայն Հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Օրհնեալ գովեալ եւ փառաւորեալ, Հրաշալի եւ աստուածազարդ (յարութեանն) Քրիստոսի երկիրպագանեմք:

Դպիրքն

Փառք յարութեան քո Տէր:

Սարկաւագն

Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն, սրբոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի եւ Խաթայ, Մեսրոպայ վարդապետին, եւ Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, Հովուաց եւ Հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորացն՝ Պօղոսի, Անտօնի, Պօղայ, Մակարայ, Ռնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսենի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմէոնեանց, սրբոց Ռսկեանց եւ Սոքեասանց, եւ ամենայն սրբոց Հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Թագաւորաց Հաւատացելոց, սրբոցն Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսից, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ Թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Ընդհանուր ամենայն Հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամենայն չափու Հասակի Հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քահանայն

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զսուրբ կաթողիկէ եւ զառաքելական Եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միաճնի քոյ, եւ ազատեցեր խաչին սրբով: Շնորհեա սմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոստնս՝ որք ուղիղ վարդապետութեամբ Համառօտն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Եւ առաւել զեպիսկոպոսապեան մեր եւ զպատուական Հայրապետն Ամենայն Հայոց զՏէր **անուն** սրբազնագոյն Կաթողիկոսն, եւ վիճակիս բարեխնամ առաջնորդն զՏէր **անուն** սրբազան (արք) եպիսկոպոսն, շնորհեցես մեզ ընդ երկայն առուրս ուղիղ վարդապետութեամբ:

Սարկաւագն

Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ Սեղանոյս, զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեցես: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական Հայրապետին Ամենայն Հայոց Տեառն **անուն** սրբազնագոյն կաթողիկոսի. եւ վիճակիս բարեխնամ առաջնորդին Տեառն **անուն** սրբազան (արք) եպիսկոպոսին. եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ:

Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց Քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից աղաչեսցուք:

Եւ ինդրեսցուք եւ վասն Հոգւոյն Հանգուցերոց: Եւ առաւել վասն Հանգուցեալ ռաբոնապետացն մերոց, եւ շինողաց սրբոյ եկեղեցոյս, եւ որք ընդ Հովանեաւ սորին են Հանգուցեալ:

Ազատութիւն եղբարց մերոց գերերոց եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս:

Հանգիստ Հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն:

Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպիրքն

Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Քահանայն

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ ըօրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս եւ զպատարագիս մատուցողս, եւ պարգեւեա սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա եւ օրհնեա զուխտաւորս եւ զպըտղաբերիչս Եկեղեցոյ քում սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, եւ Հատո նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քում Հարիւրապատիկ աստ եւ ի Հանդերձելումդ:

Յիշեա, Տէր, եւ ողորմեա, եւ գթա ի Հոգիս Հանգուցերոցն. Հանգո զնոսա եւ լուսաւորեա եւ դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից եւ արժանի արա ողորմութեան քում:

Վասն ննջեցելոց

Յիշեա, Տէր, եւ զՀոգի ծառայիս քոյ **անուն** եւ ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, եւ Հանգո այցելութեամբ ի լոյս երեսաց քոց:

Վասն կենդանեաց

Փրկեա **անուն** յամենայն յորոգայթից Հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա, Տէր, եւ զայնտօսիկ, որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթն ըզկենդանիս եւ զՀանգուցեալս, եւ կառավարեա զկամն Հայցմանց Կոցա եւ զմերս, ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ, եւ վարձատրեա բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ:

Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացո յընդունակութիւն Մարմնոյ եւ Արեան Միաճնի քոյ Տեսուն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրոստոսի, ընդ որում քեզ Հօր ամենակալի, Հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:

Դպիրքն

Ամէն: Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր, ողորմեա:

Սարկաւագն

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւս առաւելապէս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր, ողորմեա:

Սարկաւագն

Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր, ողորմեա:

Սարկաւագն.

Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զչնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր, ողորմեա:

Սարկաւագն

Ընկալ կեցո եւ ողորմեա, եւ պաշեա զմեզ Տէր, քոյին շնորհիւդ:

Դպիրքն

Կեցո, Տէր, եւ ողորմեա:

Սարկաւագն

Զամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյսն Մարիամ Հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն
Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

Սարկաւագն
Եւ եւս միաբան վանն ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեացուք:

Դպիրքն
Տէր, ողորմեա:

Սարկաւագն
Չանձինս մեր եւ զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն
Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սարկաւագն
Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում: ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրքն
Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Քահանայն
*Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանամք զքէն, որ ի վեր քան զերանելի նաՀապետացն զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն. վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ՝ Հայր Հաճեցար անուանիլ գթալով:
Եւ այժմ, Տէր, աղաչեմք զքեզ, զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ի մէջ Եկեղեցւոյ քում՝ սրբոյ:
Եւ սուր մեզ Համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:*

Դպիրքն
Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: ՉՀաց մեր Հանապազորդ սուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն այլ փրկեա ի չարէ:

Քահանայն
*Տէր տէրանց, Աստուած աստուծոց, թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեայ ի չարէ եւ ապրեցո ի փորձութենէ:
Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:*

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն
Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպիրքն

Առաջի քո Տէր:

Քահանայն

Որ աղբիւրդ ես կենաց եւ բխումն ողորմութեան Հոգիդ Սուրբ, ողորմեա ժողովրդեանս՝ որք խոնարհեալ երկիրպագանեն Աստուածութեան քում:

Պաշէա զսոսա ամբողջս. տպաւորեա յոգևջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի, առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ Հանդերձելոցդ բարեաց.

Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենակալի, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն

Պաշխումէ:

Քահանայն

Ի սրբութիւն սրբոց:

Դպիրքն

Միայն սուրբ: Միայն Տէր:

Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր:

Ամէն:

Քահանայն

Նայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ. եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա տալ մեզ յանարատ Մարմնոյ քումմէ եւ ի պատուական Արենէ, եւ ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս:

Քահանայն

Օրհնեալ Հայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն

Ամէն:

Քահանայն

Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն

Ամէն:

Քահանայն

Օրհնեալ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն

Ամէն:

Քահանայն

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն

Սմէն:

Հայր սուրբ. Որդիդ սուրբ. Հոգիդ սուրբ:

Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Սմէն:

Քահանայն

Տէր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն Միաձնի Որդւոյ քոյ Քրիստոնեայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն Հոգեւոր աւազանան ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ Հաղորդիչ սուրբ Մարմնոյ եւ Արեան Միաձնի քոյ:

Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր, արա զմեզ արժանի ընդունիլ զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն. եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի սուրբ, ի սուրբ, պատուական Մարմնոյ եւ Արեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ. որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում:

Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում: Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբեականս:

Ձգեսցեն զվարագոյրն:

Դպիրքն

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Սմէնասուրբ Երրորդութիւն. տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն. ննջեցելոց արքայութիւն:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա: Յիսուս փրկիչ մեզ ողորմեա:

Միջնորդութեամբ սուրբ եւ անմահ պատարագիս:

Ընկալ, Տէր եւ ողորմեա:

Սարկաւագն

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս Հոգեւորս:

Չի սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք, ալելուք եւ երգք Հոգեւորք:

Պաշտօնեայք Հանդերձ երգօք սաղմոս ասացէք եւ զՏէր յերկինս օրհնեցէք:

Քահանայն

Չոր օրհնութիւն կամ զոր գոհութիւն ի վերայ Հացիս եւ Բաժակիս ասասցուք: Այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք Հանդերձ Հարբ եւ Սմէնասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խոստովանիմ եւ Հաւատամ զի դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ որ բարձեր զմեզս աշխարհի:

Եւ բեկեալ արկցէ ի բաժակն Արեան, ասելով.

Լրումն Հոգւոյն Սրբոյ:

Քահանայն

Հայր Սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միաձնի քոյ եւ լուսաւորեցեր մկրտութեամբ Հոգեւոր աւազանին, արժանի արա ընդունիլ զսուրբ խորհուրդս զայս մեզ ի

մեղաց թողութիւն: Տպաւորեալ ի մեզ գշնորՀս Հոգւոյդ Սրբոյ որպէս ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին եւ եղէն մաքրիչք ամենայն աշխարՀի:

Եւ արգ՝ Տէր, Հայր բարերար, զՀաղորդութիւնս զայս մասնաւորեալ ճաշակման երեկոյնն աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց: Մի Հայիր յանարժանութիւնս իմ, եւ մի արգեղցես գշնորՀս Հոգւոյդ Սրբոյ: Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում պարգեւեալ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց, որպէս խոստացաւ եւ ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՛ ամենայն որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ զԱրիւն իմ, կեցցէ ի յաւիտեան:

Արգ՝ արա զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբեցեն ի սմանէ՛ Հանցեն զօրՀնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Խաղաղութիւն ամենեցուն:

ԳոՀանամ զքէն, Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս Հաղորդիլ սուրբ Մարմնոյ եւ Արեան քոյ:

Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն Հոգւոյ եւ մարմնոյ, եւ ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան: Որպէս զի սրբեցէ սա զշունչս իմ եւ զՀոգի եւ զմարմին իմ: Եւ արասցէ զիս տաճար եւ բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ: Չի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յովհաննու Ոսկեբերանին ասացեալ աղօթք

ԳոՀանամ եւ մեծացուցանեմ եւ փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ Հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի խորՀրոյդ քում, անարատ Մարմնոյդ եւ պատուական Արեանդ:

Վասն այտորիկ զսոսա ի բարեխօսութիւն ոճնելով՝ աղաչեմ յամենայն աւուրս եւ ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան քոյ պաշտեալ զիս. որպէս զի յիշելով զբարեգթութիւնս քո եւ կենդանի եղէց ընդ քեզ: Որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար:

Մի մերձեցի, Տէր իմ եւ Աստուած, խորտակիչն, կնքելով անձին իմոյ պատուական Արեամբդ քով: Ամենակարող, մաքրեալ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ:

Ամրացո զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ, եւ զպատերազմոյն իմ դարձո յինէն յետս, պատկառեալ եւ ամաչեցեալ՝ որչափ յառնէ ի վերայ իմ: Ամրացո զգնացս մտաց եւ լեզուի իմոյ, եւ զամենայն ճանապարՀս մարմնոյ իմոյ:

Լեր Հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ՛ որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ զԱրիւն իմ, նա յիս բնակեցի եւ ես ի նմա: Դու ասացեր մարդասէր, կացո զբանս աստուածային անլուծելի Հրամանաց քոց: Քանզի դու ես Աստուած ողորմութեան, եւ գթութեան, եւ մարդասիրութեան, եւ պարգեւիչ ամենայն բարեաց, եւ քեզ վայելէ փառք, Հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա տեառնագրեցէ զինքն եւ խնդրեցէ ի ճշմարտէն Աստուծոյ զպէսպէս հայցուածս անձին իւրոյ եւ ժողովրդեան եւ աշխարհի: Եւ թողութիւն խնդրեցէ վասն իւրոց թշնամեաց եւ ատելեաց: Եւ անդէն ահիւ եւ դողութեամբ ճաշակեցէ ի Մարմնոյն եւ արբցէ ի Բաժակէն՝ ասելով.

Հաւատով Հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ, ի Հայր եւ Որդի եւ ի Հոգիդ Սուրբ: Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենդանարար եւ զՓրկագործ Մարմինս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս՝ ի թողութիւն մեղաց իմոց:

Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ Արիւնս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց:

Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ Արիւն քո ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրքն

Օրհնեալ է Աստուած:

Քրիստոս պատարագեալ: բաշխի ի միջի մերում: Ալելուիա:

Չմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարինն իւր ցօղէ ի մեզ: Ալելուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս: Ալելուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր: Ալելուիա:

Օրհնեցէք զՏէր յերկինս: Ալելուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս: Ալելուիա:

Օրհնեցէք զնա ամենայն Հրեշտակք նորա: Ալելուիա:

Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա: Ալելուիա:

Խոստովանութիւնն եւ Արձակումն

Քահանայն

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ամէն:

Ժողովուրդն

Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ Սրբունւոյ Աստուածածնին, եւ առաջի քո՛ Հայր Սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ Աստուծոյ:

Քահանայն

Աստուած թողութիւն շնորհեցէ:

Ժողովուրդն

Մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. Հպարտութեամբ, նախանձու, բարկութեամբ, ծուլութեամբ, ագահութեամբ, որկրամոլութեամբ, բղջախոհութեամբ, եւ մասամբք սոցին. մեղայ Աստուծոյ:

Քահանայն

Աստուած թողութիւն շնորհեցէ:

Ժողովուրդն

Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն եւ Հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականն կատարեցի եւ ոչ ի Հրաժարելեացն Հեռացայ, զօրէնս առի՛ եւ յօրինացն Հեղքացայ, ի կարգս քրիստոնէութեան Հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ, գիտելով՝ զչարն՝ կամաւ կորացայ, եւ ի բարեաց գործոց ես ինձէն Հեռացայ: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Չո՛րն ասեմ կամ զո՛րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ. մեղայ Աստուծոյ:

Քահանայն

Աստուած թողութիւն շնորհեցէ:

Ժողովուրդն

Հայր սուրբ, զքեզ ոնիմ միջնորդ Հաշտութեան եւ բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

Քահանայն

Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Ողորմեսցի քեզ մարդասերն Աստուած եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացերոցն եւ մոռացերոցն: Եւ ես կարգաւս քաճանայական իշխանութեան եւ Հրամանան աստուածային թԷ՝ զոր արձակիցէք յերկրի եղիցի արձակեալ յերկինս, նովին բանին արձակեմ գրեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց՝ ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց. յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. եւ դարձեալ տամ գրեզ ի խորհուրդս Սուրբ Եկեղեցւոյ զի զոր ինչ գործիցես բարիս՝ եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս Հանդերձեալ կենայն. ամէն:

Քարշեսցեն զվարագոյրն:

Սարկաւագն

Երկիւղիւ եւ Հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ Հաղորդեցարուք:

Եւ յետ հաղորդելոյն դպիրքն բարձր ձայնի՝

Դպիրքն

Աստուած մեր եւ Տէր մեր երեւեսցաւ մեզ:

Սաղմոս ԻԷ. 9

Քահանայն

Կեցո, Տէր, զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո:

Հովուեա եւ բարձրացո զսոսա յայսմ՛նէտէ մինչեւ յաւիտեան:

Ձգեսցեն զվարագոյրն:

Դպիրքն.

Լցաք ի բարութեանց քոց Տէր. ճաշակելով զմարմին քո եւ զարին:

Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Որ եւ Հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զՀոգւետր քո զօրհնութիւն:

Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սարկաւագն

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն

Տէր ողորմեա:

Սարկաւագն

Եւ ես Հաւատով ընկալեաք յաստուածային, սուրբ, երկնային, անմաճ, անարատ եւ անապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Դպիրքն

Գոհանամք գրէն Տէր որ կերակրեցեր զմեզ յանմաճական սեղանոյ քո: Բաշխելով զմարմինդ եւ զարինդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Քահանայն

Գոհանամք գրէն, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զԵկեղեցի տաճար սրբութեան, ուր փառաբանի անուն սուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստոս թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար Մարմնով եւ Արեամբ քով սրբով շնորհեա զքաւութիւն եւ զմեծ զողորմութիւն: Ալէլուիա: Գոհանամք զքէն, Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ լեկեղեցի. անարատ պաշեա Հաւատով Երրորդութեանդ յայսմէտէ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա: Գոհանամք զքէն, Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմբ պաշեա զմեզ սուրբս եւ անարատս, բնակեալ զմեզք քո աստուածային խնամօքդ: Հովուեա զմեզ յանդատանի կամաց քոց սրբոց եւ բարեսիրաց, որով ամրացեալք յամենայն բանաարկուն ընդդիմութեանց, քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի. եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ Հովուիդ Հետեւիլ, եւ առ ի քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից. Աստուած մեր եւ Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Անքնին, անՀաս, երբեակ ինքնութեանդ, Հաստիչ ընդունող, եւ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանդ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ բացցեն զվարագոյրն: Եւ պապ առեալ քահանայն զԱւետարանն Սուրբ եւ երիցս երկրպագեալ համբուրեացէ զՍուրբ Սեղանն եւ իջեալ ի մէջ Եկեղեցւոյն հանդերձ սարկաւազօք, ասէ.

Յովհաննու Ոսկեբերանին ասացեալ աղօթք

Քահանայն

Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն զքեզ Տէր, եւ սուրբ առնես զուսացեալս ի քեզ:

Դպիրքն

Օրհնեալ է Աստուած:

Քահանայն

Կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո, զորումն Եկեղեցւոյ քո պաշեա:

Դպիրքն

Ամէն:

Քահանայն

Սրբեա զսոսա՝ որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո. դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողուր զուսացեալս ի քեզ:

Դպիրքն

Ամէն:

Քահանայն

Չխաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քաղանայից, պետութեանց խաղաղարարաց, Հանրապետութեանցն Հայաստանի եւ Միացեալ Նահանգաց Ամերիկայի, պաշտօնեից եւ զինուորեալ մանկանց նոցա. եւ ամենայն ժողովրդեանս:

Դպիրքն

Ամէն:

Չի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի քէն՝ որ ես Հայր լուսոյ, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն

Երիցս

Սաղմոս ԸԺԲ. 2

Ամէն եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմէտէ մինչեւ յաւիտեան:

Քահանայն

Կատարումն օրինաց եւ մարգարեից դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայրակամ անօրէնութիւնս քո:

Լից եւ զմեզ Հոգւովդ քով Սրբով:

Սարկաւագն

Օրթի:

Քահանայն

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն

Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Երկիւզածութեամբ լուարուք:

Քահանայն

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:

Դպիրքն

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկաւագն

Պռօսիսումէ:

Ասէ Աստուած:

Քահանայն.

Ի Հօրէ լուսոյ.

Ի սկզբանէ եր Բանն եւ Բանն եր առ Աստուած, եւ Աստուած եր Բանն: Նա եր ի սկզբանէ առ Աստուած:

Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեն: Նովաւ կեանք եր, եւ կեանքն եր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ եւ խաւար նմա ոչ եղեւ Հասու:

Եղեւ այր մի առաքեալ Աստուծոյ՝ անուն նմա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին Հաւատասցեն նովաւ: Ոչ եր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն:

Էր լոյսն ճշմարիտ՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոյ է յաշխարհ: Յաշխարհի եր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան:

Իսկ որք ընկալանն զնս՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց Հաւատասցեն յանուն նորա. ոյք ոչ յարենէ, եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ Աստուծոյ ծնան:

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զՄիաճնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Սարկաւագն

Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

Սուրբ խաչիւս աղաչեսցո՛ք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ:

Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Քահանայն

Պաշտօնեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ Հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն

Սաղմոս ԼԳ. 1

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քահանայն

Օրհնեաք եղերո՛ք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Երթայք խաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:



Պաշտօն Հոգեհանգստեան

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Ընկալ կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն

Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր Բանդ Աստուած. թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս գատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Դպիրքն

Սաղմոս ՃԻԹ. 1

Ալէլուիա. ալէլուիա.

Ի խորոց կարգացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում:
Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:

Սարկաւագն

Ալէլուիա. Օրթի:

Քահանայն

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն

Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն

Երկիւղածութեամբ լուարուք:

Քահանայն

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ **աւետարանի ի:**

Դպիրքն

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկաւագն

Պաշտումն:

Դպիրքն

Ասէ Աստուած:

Քահանայն

**ԲԿ. եւ ԴԿ.
Մատթէոս ԺԱ. 25-30**

Տերն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, Գոհանամ զքէն, Հայր, Տեր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմասանոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց: Ար, Հայր, զի այսպէս Հաճոյ եղեւ առաջի քո:

Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ եթէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել:

Եկայք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես Հանգուցից զձեզ: Առէք զրուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն, զի Հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք Հանգիստ անձանց ձերոց: Չի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի:

**ԲԶ. Եւ ԴԶ.
Մարկոս Դ. 2-34**

Տերն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր. Եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ, եւ սերմանիքն բուսանիցին եւ աճիցեն. եւ նա ոչ գիտէ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն եւ ապա զՀասկն, եւ ապա զցորեանն ասողք ի Հասկին: Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի Հասեալ են Հունձք:

Եւ ասէր, Ո՛ւմ նմանեցուցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առական առակեցուք զնա: Որպէս Հատն մանանիսոյ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս որ են յերկրի. Եւ յորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինել ընդ Հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել:

Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտայն իւրոց մեկներ զամենայն:

**ԱԿ. Եւ ԳԿ.
Ղուկաս ԺԲ. 32-40**

Տերն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Մի երկնչիր, Հօտ փոքրիկ, զի Հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց Հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ: Չի ուր գանձս ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, եւ ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան որ ակն ունիցին տեսան իւրեանց թէ երբ դառնայցէ ի Հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ աճցէ եւ բազմեցուցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պաճու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտեր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր թոյլ ական Հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ:

**ԱԶ. Եւ ԳԶ.
Յովհաննէս ԺԲ. 24-28**

Տերն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ Հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձս իւր՝ արձակէ զնա. եւ որ առեայ զանձս իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանն յաւիտենականս պաշտեցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր ենն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

Դպիրքն

Քահանայք եւ ժողովուրդք Հայցեմք ի քէն Տէր բարեգութ: Ընդ ննջեցեալն Հաւատով ընկալ զմեզ նովին յուսով, Երուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երբեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս Հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղանակերպ ի դրախտին Եդեմական պայծառացեալ արժանապէս. ողորմեա՛ծ Տէր, ողորմեա Հուոցն մեր ննջեցելոց:

Քահանայն

Հոգւոցն Հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա Հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

Սարկաւագն

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն Հանգուցեալ Հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն մեր Քրիստոս, զի զնոսս ընդ արդարան դասեսցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա: Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, անտխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի Հոգիս Հանգուցեալ ծառայից քոց: Մանաւանդ ի Հոգիս **անուն ծառայի/աղախնոյ քո: Յիշեա յաւուր մեծի գալլատեան արքայութեան քո: Արա արժանի ողորմութեան քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Սարկաւագն

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն

Պաշտօնեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ Հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոցն. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Ժողովուրդն

**Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն քո,
Եկեսցէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:
ՉՀաց մեր Հանապազորդ սուր մեզ այսօր:
Եւ թող մեզ զպարտիս մեր
որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն
այլ փրկեա զմեզ ի չարէ:**

Քահանայն

Չի քո է արքայութիւն, եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Դպիրքն

Սաղմոս ԼԳ. 1

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. օրհնութիւն նորա ի բերան իմ:

Օրհնեաք եղերոք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Երթայք խաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:

